



ՀԱՄԱՅՆՔԻ ՎՐԱ «ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԹԵՂՈՒՏ և ՇՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Իրականացնող՝ ՓԳԹ Անահիտ Մկրտչյան
«Համայնքային փոխօգնություն» Սոցիալական ՀԿ-ի ղեկավար



ՄԱՐՏ 2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼոր» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» դրամաշնորհային ծրագրի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի ստանդարտի 1-ին պահանջի 1.3 կետի (Քաղաքացիական հասարակության մասնակցություն), 7-րդ պահանջի 7.1 կետի (Հասարակական դեբատների անցկացում) և Քաղաքացիական հասարակության մասնակցության արձանագրության 2.5 կետի (Հասարակության կողմից որոշումների կայացման գործընթացի ապահովում) կատարումը:

Որպես ծրագրի թիրախ ընտրված Լոռի, Գեղարքունիք, Սյունիք մարզերի հանքարդյունաբերությանը առնչվող համայնքներից (Լոռու մարզի Ախթալա (+Ճոճկան, Մեծ Այրում), Շնող (+Թեղուտ), Գեղարքունիքի մարզի Սոսք, Սյունիքի մարզի խոշորացված Կապան (+Քաջարան, Արծվանիկ, Սյունիք, Գեղանուշ բնակավայրեր), Մեղրի (+ Ագարակ)) առաջին այցելությունը կազմակերպվեց դեպի Թեղուտ և Շնող բնակավայրեր: Տես Նկար N1



Նկար 1 Լոռու մարզ, Թեղուտ, Շնող

ԹԵՂՈՒՏ բնակավայրը, հիմնադրված 20-րդ դարի սկզբին, տեղակայված է Դեբեդի վտակ Շնող գետի աջ ափի լեռնային անտառոտ վայրում: Բնակավայրի զբաղեցրած մակերեսը 9.5կմ² է, բարձր է ծովի մակարդակից 750մ: Բնակչությունը 769 մարդ է (http://ori.mtad.am/u_files/file/lori/Hamaynqneri%20varchakan%20taracqner/Shnogh/Teghut.pdf): սեզոնային կամ մշտական միգրացիայի թվերի մասին օբյեկտիվ տեղեկատվություն

չենք կարող ներկայացնել, և բնակիչների պնդմամբ այս պահին մոտ 680 մարդ է ապրում Թեղուտում: :

Բնակչությունն ավանդաբար ընդգրկված է եղել անասնապահության, պտղաբուծության, բանջարաբուծության, հարևան քաղաքների թեթև և սննդի արդյունաբերության, իսկ վերջին տասնամյակում նաև հանքարդյունաբերության ոլորտներում:

2018թ. տվյալներով 7 մարդ նպաստառու է¹: Թեղուտն ունի միջնակարգ դպրոց, ակումբ, մանկապարտեզ, գրադարան, կինոթատրոն և բուժկետ:

ՇՆՈՂ հնագույն բնակավայրը գտնվում է Դեբեդ գետի աջափնյա սարավանդի և հարակից ձորերի ու բլուրների տարածքում: Բնակչությունը 1831 թվականի 538 մարդուց 1989-ին դարձել է 3328, իսկ 2011-ին նվազել մինչև 2810 մարդ (<http://lori.mtad.am/about-communities/550/>): Սեզոնային կամ մշտական միգրացիայի թվերի մասին օբյեկտիվ տեղեկատվություն չենք կարող ներկայացնել:

2018թ. տվյալներով բնակավայրն ունի 61 նպաստառու²:

Շնողը շրջապատող անտառները հարուստ են արժեքավոր ծառատեսակներով, վայրի պտուղներով, հատապտուղներով: Անտառներին բնորոշ է հարուստ կենսաբազմազանությունը: Բնակավայրն ունի միջնակարգ հանրակրթական և յոթամյա արվեստի դպրոցներ, մշակույթի տուն, 2 գրադարան, կապի բաժանմունք, կինո, կենցաղասպասարկման տաղավար, 2 մսուր մանկապարտեզ, հիվանդանոց, ամբուլատորիա, դեղատուն, հայրենագիտական թանգարան:

Հարակից բարեբեր, արգավանդ լեռնալանջերը, նախալեռնային տարածքները, գետահովիտները բնակչությանն ավանդաբար հնարավորություն են ընձեռել զբաղվել հացահատիկների, տեխնիկական, բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ և այգեգործությամբ:

Շնող և Թեղուտ բնակավայրերի մերձակայքում է տեղադրված Թեղուտի պղինձ-մոլիբդենային արդյունաբերական հանքավայրը (գործել է 2015-2017 թթ.,


¹ http://www.mlsa.am/?page_id=368

² Տես Նույնը

2018թ.-ին գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է): Այն իր չափերով Հայաստանում երկրորդն է իր տեսակի մեջ, Քաջարանի հանքավայրից հետո:

Նախկինում անտառածածկ Թեղուտի հանքավայրի ամբողջ տարածքը նպաստում էր ջրային հոսքի բնական ձևավորմանը և դրա պահպանմանը՝ դառնալով տարածաշրջանի խմելու և ոռոգման աղբյուր: Մասնավորապես, Թեղուտի հանքավայրի անտառածածկ տարածքը Շնող գետի ջրհավաք ավազանի ջրագոյացման գոտին է:

ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1N 1278-Ն որոշմամբ Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 146,736 հեկտար և Թեղուտ գյուղական համայնքի 46,397 հեկտար անտառային հողերը փոխադրվել են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա³:



Նկար2. Թեղուտի հանքավայրի տարածք

Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 5,368 հեկտար և Թեղուտի 17,770

³ 040.1278.161107 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ, 1 նոյեմբերի 2007 թվականի N 1278-Ն: ԹԵՂՈՒՏԻ ՊՂԱՋԱՍՏՈՒԼԻԲՂԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

հեկտար անտառային հողերը փոխադրվել են էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

Շնորհի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 11,643 հեկտար հողերը, Թեղուտի 5,232 հեկտար հողերը փոխադրվել են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա և այսպես շարունակ:

«Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում գյուղատնտեսական, անասնապահական նշանակության հողերի ու անտառային տարածքների կորուստների, արդեն վերջին երկու տարում նաև հանքի շահագործման դադարեցման արդյունքում Շնորհի և Թեղուտի բնակիչները զրկվել են գյուղատնտեսական և անտառային արտադրանքի նախկին եկամուտներից, ինչպես նաև հանքում ժամանակավոր զբաղվածությունից ստացվող եկամտից՝ դրանով իսկ երիտասարդ տղամարդկանց մղելով արտագաղթի, իսկ կանանց ու ծերերին ապրելու սակավ և աղտոտված հողային ու ջրային ռեսուրսների պայմաններում: Ավելին, բացասական հետևանքների կանխարգելման և հետևանքների վերացմանը միտված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի ընկերությունների ցանկում «Թեղուտ» ՓԲԸ-ի ընդգրկված չլինելու պատճառով ազդակիր բնակավայրերը հնարավորություն չունեն բնապահպանական և սոցիալական ծրագրերի իրականացման համար օգտվել ընկերության բնապահպանական վճարներից:

Հայաստանի հանքարդյունաբերության գործունեությունը և դրա ազդեցություններն առավել վերահսկելի ու հաշվետվողական դարձնելու նպատակով 2017 թվականին Հայաստանը դարձել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) թեկնածու երկիր⁴: Այս անդամակցությունը պարտավորություններ է դրել պետական, գործարար համակարգերի և քաղաքացիական հասարակության երկխոսության միջոցով

⁴ <https://eiti.org/news/eiti-board-welcomes-armenia-to-eiti-family>

հրապարակային ձևով ապահովել արդյունահանող ճյուղերի գործունեության ֆինանսական թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Այսպիսով, մեր ձեռնարկած ուսումնասիրությունն ուղղված էր պարզելու Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքի շահագործման սոցիալական ազդեցությունների՝ ազդակիր բնակչության գնահատականը ու խնդիրների հաղթահարման ուղղությամբ Շնող և Թեղուտ բնակավայրերում հանքի իրականացրած աշխատանքները, վերաբերելի օրենսդրության մասին բնակիչների տեղեկացվածության մակարդակը, ինչը կնպաստի համայնքի շահերի պաշտպանությանը միտված համայնքի ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի այլընտրանքային/գործող անդամ դարձնելու և ԱՃԹՆ գործընթացում քաղաքացիական հասարակության դերակատարներին ներգրավվելու հնարավորությունների օգտագործմանը:

Մասնավորապես, Թեղուտ և Շնող բնակավայրերի վրա հանքի գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների գնահատման նպատակով իրականացված խորին հարցազրույցը ձևակերպել էր հետևյալ խնդիրները՝

1. Բացահայտել հանքի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և դրանք ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. Արձանագրել հանքի կողմից համայնքների մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված վնասների բնակչության գնահատականները
3. Պարզել հանքի գործունեության վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ բնակիչների իրազեկվածության մակարդակը
4. Պարզել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործընթացներում բնակչության մասնակցության հնարավորությունները
5. Արձանագրել օրենսդրության կիրարկմամբ հանքի գործունեության հետևանքների հաղթահարման բնակիչների առաջարկությունները

Նշված խնդիրների լուծման համար մշակվել են առաջարկություններ՝ ուղղված քաղաքացիական հասարակության կողմից բնակչության մասնակցային վարքը ձևավորելու ու ԱՃԹՆ գործընթացներում լիակատար ընդգրկվելու հնարավորությունների օգտագործմանն ու դժվարությունների հաղթահարմանը:

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցազրույցի նպատակին՝ Թեղուտ և Շնող բնակավայրերի վրա հանքի գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում ընդգրկվելու մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների բացահայտումը իրականացնելու համար ընտրվել է խորին հարցազրույցի մեթոդը:

Որպես գործիք ընտրվել է հարցազրույցի ուղեցույցը, որի բաժիններն են.

1. հանքի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. ընտրված համայնքների կենսագործունեության վրա հանքի ազդակիր համայնքների օդին, ջրին, հողին հասցված վնասների գնահատականները
3. բնակիչների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը հանքի գործունեության վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման հարցերում
4. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները և հանքի շահագործման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման վերաբերյալ բնակիչների առաջարկությունները

Որպես հարցման օբյեկտ ընտրվել են Շնող և Թեղուտ բնակավայրերը: Հարցազրույց վարվել է 12 շնողցիների և 8 թեղուտցիների տնային տնտեսություններում: Հարցազրույց վերցվել է 9-ը իգական և 11-ը արական սեռի ներկայացուցչից: Թեղուտցիները, որ հիմնականում հանքի նախկին աշխատողներ էին, խիստ դյուրագրգիռ էին ու մեզ հետ շփվելու հարցում ընդգծված մերժողականություն են դրսևորել:

Հարցազրույց վարվել է հողագործ, մանկավարժ, առևտրի աշխատող, համայնքապետարանի աշխատակից մասնագիտական խմբերի հետ:



Նկար 3 Հարցազրույց Թեղուտի ընտանիքներից մեկում

Հարցազրույցները բացահայտեցին, որ «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները եղել են հանրային լուսմները, համայնքային ժողովներն ու քննարկումները, որոնք անցկացրել է «Թեղուտ» ՓԲԸ-ի ղեկավարությունը, համայնքապետարանը: Ընդ որում, հարցազրույցի բոլոր մասնակիցների հավաստմամբ այս հանդիպումների ժամանակ որևէ բացասական ազդեցության մասին իրենց չի տեղեկացվել: Մինչ հանքի գործունեության մեկնարկը հարցազրույցի մասնակիցների տեղեկացվածության մակարդակն ազդակիր համայնքի վրա հնարավոր բացասական ազդեցությունների մասին անբավարար կարելի է գնահատել:

Մինչդեռ այսօր՝ տարիներ անց, բնակչության կողմից մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված ակնհայտ վնասները կապվում են հատկապես անտառային աղբյուրների անհետացման, ոռոգման ջրի աղտոտվածության հետ: Ավելին, միայն

այսօր են մեր զրուցակից գյուղացիները զոջում իրենց գյուղատնտեսության նշանակության հողերի, արոտավայրերի կորստի համար, որով պայմանավորված նրանք զրկվել են եկամտի աղբյուրից՝ նախկինում ունեցած անասնապահության, հացահատիկների, տեխնիկական, բանջարաբուստանային կուլտուրաների արտադրանքի հնարավորություններից:

20 տնային տնտեսությունների հետ իրականացված հարցազրույցները արձանագրեցին Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության ընթացքում ի հայտ եկած վնասների կանխարգելման ու հաղթահարման աշխատանքների անբավարար գնահատականը: Սակայն, արձանագրեցինք նաև «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից համայնքի անդամների զբաղվածության խնդրի որոշակի լուծման և ներքին ճանապարհների վերանորոգման աշխատանքների՝ գյուղացիների տված դրական գնահատականները:

Թեղուտի հանքի շահագործման վերահսկման և համայնքին վերաբերող գործողությունների շուրջ որոշումների կայացման գործընթացներում բնակչության մասնակցությունը եղել է անարդյունավետ, իսկ տեղական ՀԿ-ների գործողությունները բնակչությանը մոբիլիզացնելու գործում՝ պասիվ:

Բնակիչների առջև «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեությունը հաշվետու դարձնելու ուղղությամբ բնակիչները կատարել են կազմակերպչական/կառուցվածքային, լուսավորչական, վերականգնողական բնույթի առաջարկություններ, որոնց հետ հաշվի նստելը մեծապես կավելացներ ողջ Թեղուտի ծրագրի արդյունավետությունը և կայունությունը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ. Հանքի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները:

Թեղուտ և Շնող բնակավայրերի տնային տնտեսություններում իրականացված խորին հարցազրույցները պարզեցին, որ հանքի ղեկավարությունը համայնքում անցկացրել է հանրային լուսմներ, կազմակերպել համայնքային ժողովներ, քննարկումներ, որոնց բնակիչներից շատերն են մասնակցել: Սակայն,

մասնակիցներից և ոչ մեկը չի հիշում, որ որևէ բացասական ազդեցության մասին իրենց տեղեկացված լինեին:

Պարզեցինք նաև, որ մինչև հանքի աշխատանքների սկսելը «Թեղուտ» ՓԲԸ-ի ղեկավարության կողմից տրվել են խոստումներ, նաև տասնամյակ աշխատատեղ ապահովելու հնարավորության խոստումը: Նախնական հանդիպումների ժամանակ նրանք չէին բարձրացրել իրենց կյանքի վրա հանքի գործունեության որևէ բացասական ազդեցության խնդիր:

Հարցազրույցի մասնակիցների մի մասը անգամ իրենց համար սեփականություն հանդիսացող հողերի վաճառքի գործընթացների մասին տալիս են ոչ լիարժեք տեղեկատվություն. չէին հիշում՝ արդյոք առքուվաճառքի փաստաթուղթ ստորագրել են, թե՛ ոչ: Անգամ փաստաթուղթ ստորագրողներն էլ չէին կարդացել, թե ինչի տակ են ստորագրում, ավելի ուշ հայտնաբերելով, որ իրենց ուզած գնով չի վաճառվել հողը: Հարցազրույցի մասնակիցներից մի քանիսը վրդովվում էին, թե վաճառքի գումարը միանգամից չեն տվել, ինչպես իրեն թվացել է, այլ բանկային հաշվեհամարին փոխանցել են ամսեամիս:

Հարցազրույցներից տեղեկացանք, որ 2001-2008թթ. ընկերության կողմից անտառային խոշոր տարածքները գրավելու պարտադրանքի դեմ գյուղացիները չեն ընդվզել և այսօրվա հետևանքների մասին չեն մտածել: Մինչդեռ ներկայումս, մեզ հարցազրույց տվողների մեծ մասը (20-ից 13-ը) բողոքում է անտառի ջրահավաք ֆունկցիայի խաթարումից, անտառային տարածքների խիստ պակասելու հետևանքով եկամտի նախկին աղբյուրից զրկվելուց: «Անտառի աղբյուրների ջրերը փախել են, աղբյուրները ոչնչացել են», - ասաց Թեղուտի մի բնակիչ:

Հարցազրույցը հստակ ուրվագծեց, որ բնակիչները թե հանքի աշխատանքների սկզբին, և թե այսօր բավարար իրավագիտակցություն չունեն պաշտպանելու իրենց շահերը:

ԵՐԿՐՈՐԴ. Հանքի ազդակիր համայնքի մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված վնասների բնակչության գնահատականները

Եթե որոշակի կանոնակարգում հաղորդենք հարցազրույցի ժամանակ արված մեր գրառումներին, կտեսնենք, որ հանքի գործունեության հասցրած դրական և բացասական ազդեցությունների Շնող և Թեղուտ բնակավայրերի տնային տնտեսությունների գնահատականները այսպիսին են՝

Աղյուսակ 1

	Բացասակա ն ազդեցությու ն (Տնային Տնտ.)	Դրական ազդեցությո ւն (ՏՏ)
1. Օդի մաքրություն	17	
2. Ոռոգման ջրի մաքրություն	16	
3. Բանջարեղենի և մրգի քանակ	18	
4. Վայրի մրգերի, բանջարեղենի, սունկի, կենդանի- ների քանակ	19	
5. Համայնքային և միջհամայնքային ճանապարհների որակ	5	10
6. Գյուղատնտեսական նշանակության հողերի ծավալներ, որակ	19	1
7. Աշխատատեղեր	2	18
8. Համայնքի խոցելի խմբերի աջակցություն	4	
9. Առողջության վրա	9	

Հարցազրույցներից պարզ դարձավ, որ բանջարեղենի և մրգի քանակից բողոքողները սեփական հողատարածքները ընկերությանը վաճառողներն են: Իսկ արտադրանքի որակից դժգոհները՝ սեփական հողերը պահպանածները, ում բերքը վնասվում է փոշուց և ոռոգման ջրի աղտոտվածությունից:

Գյուղատնտեսության նշանակության հողերի ծավալների փոքրացմամբ ոչնչացել է նաև համայնքում նախկինում զարգացած անասնապահությունը, հացահատիկների, տեխնիկական, բանջարաբուստանային կուլտուրաների արտադրությունը:

ը Հարցազրույցի մասնակիցների այն խումբը, որ բավարարված է եղել հանքում աշխատանք ունենալու փաստով, նախկին կոլտնտեսությունից տնային տնտեսությանը տրամադրված խոշոր հողատարածքները (անձը 3000-4000մ²)

անգործության է մատնել, անապատի վերածել: Հատկապես թեղուտցիները չեն էլ ցանկանում խոսել այդ հողակտորների մշակման մասին: Այս բնակավայրում բախվեցինք մի երևույթի հետ նույնպես, որը միջնորդավորված ձևով զուգորդվում է համայնքի բնակչության կրավորականության, իսկ երբեմն և որևէ նախաձեռնողականության բացակայության հետ: Թեղուտը տեղում նույնիսկ հաց չի թխում, այլ սպասում է Վանաձորից հաց բերեն գյուղի խանութ, իսկ նրանց բողոքներում անընդհատ հնչողը «պետությունը թող անի» արտահայտությունն էր:

N1 աղյուսակից տեսնում ենք, որ հանքի գործունեության մեկ տասնյակ ազդեցություններից գյուղացիները հատկապես դրական գնահատել են հանքի կողմից զբաղվածության խնդրի որոշակի լուծման և ներքին ճանապարհների վերանորոգման աշխատանքները:

Նշենք միայն, որ տարբեր ժամանակահատվածներում միջին թվով հանքում աշխատել են 100 թեղուտցի (բնակչությունը 769 մարդ) և 250 շնողցի (բնակչությունը 2810 մարդ), որոնք հիմնականում իրականացրել են բանվորական և մանր ծառայությունների տրամադրման աշխատանքներ:

Ինչ վերաբերում է համայնքային ներքին ճանապարհների վերանորոգմանը գյուղացիների տված դրական գնահատականներին, բնակիչներից մի քանի լավատեղյակներ հայտնեցին, որ «Թեղուտ» ՓԲԸ-ն դրա վրա ծախսել է մոտ 40 միլիոն դրամ:

ԵՐԸՈՐԴ. Բնակիչների՝ սեփական իրավունքների մասին իրազեկվածությունը՝ հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ

2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը բնապահպանական վճարներից առանձին տողով հատկացումներ է անում այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն⁵: Դրանց միջոցով

⁵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը Ընդունված է 2006 թվականի մայիսի 23-ին , ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

իրականացվում են բնապահպանական ծրագրեր՝ «Թափոնների անվտանգ հեռացում», «Հատուկ պոլիգոնների ստեղծում», «Գործող աղբավայրերի բարելավում», «Աղտոտված տարածքների մաքրում ու վերականգնում», «Դեպի ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքի նվազեցում, կասեցում, ջրային ռեսուրսների պահպանություն»։ «Կեղտաջրերի վերամշակում, կոյուղու համակարգի բարելավում», «Օդի մաքրության պահպանություն», «Աղմուկից, վիբրացիայից և ճառագայթահարումից պաշտպանություն», «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասագերծում», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանություն», «Տեղեկատվության տարածում, էկոլոգիական կրթություն», «Բնակչության առողջական վիճակի գննությունների իրականացում» և «Անհրաժեշտ բժշկական սարքավորումների տրամադրում»:

Սակայն, «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված չէ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում նշված ընկերությունների ցանկում: Հետևաբար, Շնող և Թեղուտ բնակավայրերը իրենց բնապահպանական և սոցիալական ծրագրերի իրականացման համար չեն կարող օգտվել ընկերության բնապահպանական վճարներից:

Այս Օրենքից բնակիչները գրեթե ծանոթ չեն (20 գյուղացուց 17-ը): Իսկ 3 «մասամբ ծանոթ» գյուղացի, օրենքի օգտակարությունը համայնքի համար ձևակերպելիս, հիշատակել են «համայնքի բնակիչների առողջական խնդիրների լուծումը» և «ենթակառուցվածքների զարգացումը»: Մնացած 9-ը ուղղություններից նրանք տեղյակ չէին: Շնող և Թեղուտ բնակավայրերն առ այսօր հարց չեն բարձրացրել այդ ցանկում «Թեղուտ» ՓԲԸ-ի ընդգրկելու վերաբերյալ:

Զրուցակիցների կեսից ավելին տեղյակ չէին նաև ԱՃԹՆ գործընթացներում Հայաստանի ընդգրկվելու փաստից և նրանից, որ իրենք կարող են սեփական շահերը պաշտպանելու համար ներգրավվել դրանցում:

ԶՈՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները:

Թեղուտի հանքի շահագործման բացասական հետևանքներին առնչվող օրենսդրությունից թույլ տեղեկացվածությունը թույլ է տալիս տեսակետ հայտնել առ այն, որ այս պահին ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները սակավ են: Մեր հարցազրույցի մասնակիցները և նրանց հավաստամբ նաև իրենց գյուղացիներից շատերը **հանքի շահագործման ողջ ընթացքում** գրեթե ներգրավված չեն եղել «հանքի ընդհանուր գործունեության վերահսկման», «հանքի գործունեության թափանցիկության ապահովման», «հանքի գործունեության մասին զեկույցների քննարկման», «հանքի շահագործմանը վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու» նախաձեռնություններում:

Ավելացնենք, որ բնակիչների առջև ընկերության գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու հարցում մեծագույն դեր է հատկացվում քաղաքացիական հասարակությանը: Սակայն թե Թեղուտ, թե Շնող բնակավայրերի գրուցակիցների մեծ մասը տեղյակ չեն մարզային ՀԿ-ների գոյությունից կամ նրանց գործունեությունից: Միայն վեց շնողի և երեք թեղուտցի «մասամբ բավարար» են գնահատել ՀԿ գործունեությունը, հատկապես նշելով, որ դրանք երևանյան ՀԿ-ներ էին և որ նրանց գործողությունները միտված են եղել «համայնքի իրազեկմանը»:

Բնակիչների առջև ընկերության գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու ուղղությամբ բնակիչները կատարել են այսպիսի առաջարկություններ
Կազմակերպչական/Կառուցվածքային բնույթի առաջարկներ

- Քրեական պատասխանատվության կանչել «Թեղուտ» ՓԲԸ-ի նախկին ղեկավարներին համայնքի վրա թողած բացասական ազդեցությունների համար:
- «Թեղուտ» ՓԲԸ-ն վերակազմավորում ԲԲԸ-ի և և բաժնետոմսերի հրապարակային առաջարկ
- «Թեղուտ» ՓԲԸ -ի ներառում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքով սահմանված ընկերությունների ցանկում
- Շնողի համայնքապետարանի ու Թեղուտի հանքը շահագործող ընկերության միջև պայմանագրի կնքում այն մասին, որ հանքը շահագործողները

պարտավորություն ունենան հաշվի նստել համայնքի բնակիչների առաջարկությունների հետ

- Շնորհի համայնքապետարանի, Լոռու մարզպետարանի և տարածքային կառավարման պետական մարմինների և համայնքի բնակչության հետ քննարկումների մեկնարկ հանքին այլընտրանքի, Էկոլոգիապես մաքուր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ, քանի որ անգամ հանքի վերաբացման պարագայում այն հավերժ չէ, իսկ իրենք սովոր են կիսաքաղաքային կյանքին

Լուսավորչական բնույթի առաջարկներ

- Համայնքապետարանի կողմից բնակչությանն իրազեկում պետական բյուջե ընկերությունների կողմից վճարված բնապահպանական հարկի գումարի չափի մասին
- ՀԿ-ների միջոցով Շնորհ համայնքի ակտիվիստների և համայնքապետարանի աշխատակիցների շրջանում իրազեկման բարձրացում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի դրույթներից օգտվելու համար:

Վերականգնողական առաջարկություններ

- Ձևական ծառատունկի փոխարինում իրական ծառատունկով: Տնկիների կաշտնության համար պատասխանատու վճարվող վերահսկիչի կարգմամբ, բնակավայրերի օղակում հատկապես փոշեկուլ ծառատեսակների աճեցմամբ
- Հանքի հասցրած բնապահպանական վնասների դիմաց վճարների համաչափության և հասցեականության ապահովում
- Համայնքի բնակչության առողջության մոնիթորինգի իրականացում՝ հատկապես սրտաբանական և վերարտադրողական խնդիրներ ունեցող կանանց վիճակի
- Պոչամբարի ռեկուլտիվացիա
- Այլընտրանքային մաքուր ջրագծի կառուցում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հարցման արդյունքների բացահայտումների հիման վրա կարելի է

եզրակացություն անել, որ

- A. Թեղուտի հանքի շահագործման՝ սոցիալական բացասական ազդեցությունները բնակչությանը տեսանելի են, և դրանք էականորեն ազդել են նրանց հողատարածքների քանակի և արտադրանքի որակի վրա և բնակչության առողջության վրա:
- B. «Թեղուտ» ՓԲԸ -ի կողմից վնասների կանխարգելման ու հաղթահարման աշխատանքներն իրականացվել են անբավարար չափով:
- C. «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված չէ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում, ինչը ենթակա է շտկման, որը բնակչությանը հնարավորություն կտա օգտվել բնապահպանական հարկերից և փորձել հաղթահարել հանքի ազդեցության բացասական հետևանքները:
- D. Միջին վիճակագրական բնակչի իրազեկվածության և իրավական գրագիտության մակարդակը բավարար չէ ԱՃԹՆ գործընթացներում լիարժեք ընդգրկվելու և հաջողություններ արձանագրելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր բացահայտումներն ու բնակիչների առաջարկությունները՝ էական ենք համարում հետևյալ քայլերի իրականացումը՝

Առաջին. «Թեղուտ» ՓԲԸ-ն օրենքով սահմանված ընկերությունների ցանկում ներառելու բնակչության գործողություններին ՀԿ աջակցություն

Երկրորդ. բնակչության ու ՏԻՄ-երի շրջանում ուսուցողական աշխատանքի կազմակերպում ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարից նպատակային օգտագործման մասին օրենքից օգտվելու իրավունքի, ծրագրեր մշակելու հմտությունների ու դիմելու կանոնների մասին

Երրորդ. ՀԿ-ների ուժերով իրազեկման աշխատանքի իրականացում բնակչության մասնակցային վարք ձևավորելու ու ԱՃԹՆ գործընթացներում փաստացի մասնակցություն ապահովելու ուղղությամբ:

*Մույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից
իրականացվող*

*«Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ գործընթացի լիարժեք
մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-
ի(USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն
կենտրոն»(ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից
իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու
կառավարման» ծրագրի շրջանակներում:*